# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Նախագիծը կատարված է համաձայն պայմանագրի:
Համաձայն պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի իրականացվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին հանձնված` Երևան քաղաքի Գարեգին Նժդեհի 27 հասցեում գտնվող մասնաշենքի վերակառուցման նախագիծ :
Գոյություն ունեցող շենքը` երկու հարկանի կարկասային սխեմայով և պատի կախովի պանելներով կառուցված շինություն է: Ծածկը կառուցված է կողային ծածկի սալերից: Շենքը բաղկացած է դահլիճից 12x24 մ չափերով,H 5.5 մ և առանձին սենյակների համակարգից:
Տանիքը հարթ է, իրականացված ջրամեկուսիչ նյութից:

Նախագծով նախատեսված է իրականացնել դահլիճի երկու լայնական պատերից մեկական 6,0 մ քայլով ե/բետոնե 40x40 սյուների կառուցում , և 40x60 պարզունակներով շրջանակներ, որի վրա իրականացնել Ե/բետոնե 120 մմ հաստությամբ միջհարկային ծածկի կառոցում H =2,5 մ նիշի վրա:

Նախագծով նախատեսված է բոլոր մասնաշենքերի ալյումինե պատուհանների փոխարինում մետաղապլաստի , արտաքին դռների և վիտրաժների փոխարինում ալյումինե ջերմակամուրջով դռների և վիտրաժների:

Նախատեսված է ամբողջությամբ քանդել գոյություն ունեցող միջնորմները, իրականացնել նոր ` ամրանավորված միջնորմներ: Քանդել բոլոր հատակները, աստիճանների և հարթակների երեսապատման սալիկները:
Արտաքին ճակատների պատի պանելների և տուֆե պատերի մեջ բացել բացվածքներ , պատուհանների տեղադրման համար:
Նախագծով նախատեսված է կառուցել աշխատասենյակներ, դահլիճ, նախամուտք և սանհանգույցներ: Աշխատասենյակներում պատերը և առաստաղը նախատեսված է իրականացնել գաջի սվաղ, որի վրա ներկում կիսափայլուն լատեքսով, իսկ հատակը լամինատ 8 մմ հաստությամբ: Միջանցքներում և տեխնիկական սպասարկման սենյակնրում հատակները նախատեսված է մամլոգրանիտից 60x60 չափի, իսկ պատերը լատեքսային և յուղային ներկերով ներկում: Սանհանգույցները պատերը ` կերամիկական սալիկներից, առաստաղը` կախովի պլաստմասե, հատակը ` խեցեսալով:
Նախատեսված է մուտի մոտ տեղադրել մետաղապլաստե վիտրաժ, անվտանգության աշխատակիցների համար, և մուտքի , ելիքի համար նախատեսված է տեղադրել մեխանիկական և էլեկտրոնային փականներով անցակետեր:

Գլխավոր ճակատի վրա նախատեսվում է կառուցել նոր պատեր, երեսապատել 30 մմ հաստ տուֆե և բազալտե սալիկներով: Տեղադրել դեկորատիվ Φ 300 մմ չափի սնամեջ , h 3,0 մ տուֆե սյուներից:

Նախատեսված է թեքահարթակների և աստիճանների կառուցում: Տարածքի բարեկարգում ` ճմապատում, բետոնե սալիներ 30 մմ , բետոնե և բազալտե եզրաքարեր, ճաղաշար:

## Շինարարական նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ

- Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շին.կոնստրուկցիաները և նյութերը պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ:

## Վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար պահանջվող լիցենզիաներ

Քաղաքացիական բնագավառում շինարարության իրականացում ըստ հետևյալ ոլորտների

1. Բնակելի , հասարակական և արտադրական
2. էներգետիկական
3. Հիդրոտեխնիկական

## Աշխատանքային ռեսուրսներ

1. Աշխղեկ ` Ինժեներ-շինարար «ԱՔՇ»,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով
2. Ինժեներ էներգետիկ,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով

3.Ինժեներ հիդրոտեխնիկ, առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով

## Տեխնիկական միջոցներ

1. Ինքնաթափ ավտոմեքենա 4.5տ բեռնատարողությամբ - 2 հատ
2. էքսկավատոր - 1 հատ
3. Ավտոկռունկ - 1 հատ
4. Գայլիկոնային էլեկտրական ձեռքի մեքենա - 2 հատ
5. Շաղախապոմպ - 2 հատ
6. Մածիկային ագրեգատ 45 քմ/ժ արտադրողականությամբ - 1 հատ
7. Ներկման ագրեգատ 50 քմ/ժ արտադրողականությամբ - 1 հատ

<table>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="4" rowspan="2">Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին հանձնված` Երևան քաղաքի Գարեգին Նժդեհի 27 հասցեում գտնվող մասնաշենքի վերակառուցման նախագիծ</td></tr>
<tr><td>ՏՆՕՐԵՆ</td><td>Ն. ՍԱՐԳՍՅԱՆ</td><td></td></tr>
<tr><td>ՃԱՐՏԱՐԱՊԵՏ</td><td>Ն. ՍԱՐԳՍՅԱՆ</td><td></td><td rowspan="2">ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ</td><td>ՓՈՒԼ</td><td>ԹԵՐԹ</td><td>ԹԵՐԹԵՐ</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td>ԱՆ</td><td>ՃՇ-1</td><td>42</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td rowspan="2">Ընդհանուր տվյալներ</td><td colspan="3" rowspan="2">«ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
</table>